

*Երկրաբանություն*

УДК 550-31

**ՈՍԴԻՈԱԿԻՎ ԴԱՇՏԻ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ  
ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(ըստ Մոզրով և Արջի քարայրներում կատարված  
դիտարկումների տվյալների)**

Ա. Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ \* , Մ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ \*\* , Վ. Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ \*\*\* ,  
Մ. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ \*\*\*\*

*ԵՊՀ Երկրաֆիզիկայի ամբիոն, Հայաստան*

Աշխատանքում ներկայացված են ռադիոակտիվ դաշտի ուսումնասիրությունները ստորերկրյա բնական և արհեստական դատարկություններում: ՀՀ Մոզրով և Արջի քարայրներում դաշտային դիտարկումների հիման վրա պարզվել է, որ բնական և արհեստական դատարկություններում իննութերայից դեպի Երկրի ներքափանցող ց ճառագայթների բացակայության հետևանքով, ռադիոակտիվ դաշտի հատեմսիվորյունն ավելի փոքր է, քան Երկրի մակերևույթին, ինչը պետք է հաշվի առնել փակ տարածքների շահագրծման, տուրիստական երթուղիների ընտրության և շինարարական աշխատանքների կատարման ժանանակ:

**Keywords:** caves, radiation field, ionosphere, intensity, studies, structure, tourist trips.

**Ներածություն:** Ռադիոակտիվությունը (ճառագայթաակտիվությունը) նոր երևույթ չէ, այն գոյություն է ունեցել Երկրի առաջացումից ավելի վաղ՝ տիեզերքում, իսկ Երկրի կազմի մեջ գոյություն ունի նրա առաջացման պահից: Որոշակի քանակությամբ ռադիոակտիվ նյութեր առկա են մոլորակի վրա գոյություն ունեցող բուսական և կենդանական օրգանիզմների մեջ:

Երկրի մոլորակի առաջացման ժամանակից սկսած նրա քիմիական կազմի մեջ մտած ռադիոակտիվ տարրերը բավականին մեծ դեր են կատարել ու կատարում Երկրի ներսում և մակերևույթում տեղի ունեցող գործընթացների վրա: Պարզվում է, որ եթե ռադիոակտիվ տարրերը հավասարապես բաշխված լինեն Երկրի մակերևույթից մինչև կենտրոն և նրանցից անջատվեր նույնքան էներգիա, որքան որ ներկայումս անջատվում է, ապա մեր մոլորակը պետք է գունվեր հրահեղուկ վիճակում: Ապացուցված է, որ ռադիոակտիվ տարրերի քանակությունը Երկրակեղեկից դեպի կենտրոն աստիճանաբար նվազում է: Այն հիմնականում դրանք տեղադրված է Երկրակեղեկի գրանիտային շերտում, որը, հավանաբար, պատճառ է դառնում Երկրի ժամանակակից շարժումների,

\* E-mail: [armsard@ysu.am](mailto:armsard@ysu.am)

\*\* E-mail: [maratg@ysu.am](mailto:maratg@ysu.am)

\*\*\* E-mail: [v.vardanyan@ysu.am](mailto:v.vardanyan@ysu.am)

\*\*\*\* E-mail: [tomgeomar@ysu.am](mailto:tomgeomar@ysu.am)

տեկտոնական գործընթացների՝ երկրաշարժերի, հրաբուխների և այլնի [1]: Բնական առյուրներից ստացված ուղղուակտիվ ճառագայթման մոտ 70%-ը մարդը ստանում է օդի, ջրի և սննդի միջոցով: Այսպես, պոլոնիումի (Po) և կապարի (Pb) իզոտոպները մարդու օրգանիզմ են քափանցում սննդի օգնությամբ, որոնք մեծ քանակությամբ կուտակված են հատկապես ձկների, փափկամարմինների և եղջերուների օրգանիզմներում: Քանի որ մարդը քավականին մեծ չափով ճառագայթվում է նաև օդից ուղղուականի (Rn<sup>222</sup>) միջոցով, ուստի նախ անդրադառնանք ռադոնի ֆիզիկաքիմիական հատկություններին:

Ուղղուակտիվ բնական ծագման իներտ գազ է, որը գտնվում է բնության մեջ և տրոհվում է շղթայական՝ Rn<sup>222</sup>→Po<sup>218</sup>→Po<sup>214</sup>→Bi<sup>214</sup>→Po<sup>214</sup>: Այն 7,5 անգամ ծանր է օդից, իսկ պարունակությունը տարբեր է մոլորակի տարրեր շրջաններում: Ուղղուակտիվ ռուածությունը տարբեր է մոլորակի տարրեր է: Ուղղուակտիվ 19-րդ դարի վերջին և սկզբնական շրջանում անվանել է էմանացիա: Այն անհոտ, անհամ, անտեսանելի իներտ գազ է, որի խտությունը 0°C ջերմաստիճանում հավասար է 9,81 կգ/մ<sup>3</sup>, ինչը մոտ 8 անգամ մեծ է օդի խտությունից: Ուղղուակտիվ ամենածանք ռադիուակտիվ գազն է և օժտված է յուրատեսակ հատկություններով, մասնավորապես –62°C-ում այն վերափոխվում է անգույն հեղուկի, որը լուսարձակվում է վառ երկնագույն կամ մանուշակագույն երանգներով, իսկ –71°C-ում՝ կարծր և անթափանց նյութի, արձակելով երկնագույն ճառագայթներ: Բնության մեջ այն հանդես է գալիս 3 իզոտոպների տեսքով, որոնցից ամենաերկարակյացը Rn<sup>222</sup>-ն է, որի կիսատրոհման պարբերությունը  $T_{1/2}=3,829$  օր է [2, 3]: Աշխարհի, այդ թվում նաև ՀՀ բնակչության 95%-ի մեջ տարվա ճառագայթահարման չափը կազմում է 0,3+0,6 միլիգիլերտ, որը ներկայումս մեր մոլորակի վրա համարվում է նորմալ ռադիացիոն ֆոն [4]: Ճառագայթման այդ նորման չի պահպանվում, օրինակ Բրազիլիայի, Հարավային Հնդկաստանի և Իրանի տարածքի որոշ տեղանակներում, որտեղ ռադիացիոն ֆոնի նորման գերազանցում է մոտ 800 անգամ և հասնում է 150–250 միլիգիլերտ: Գիտության և տեխնիկայի զարգացման պայմաններում ռադիուակտիվյան երևոյթի ուսումնասիրումը ներկայումս ունի նաև որոշակի կիրառություն, հատկապես երկրաշարժերի կանխագուշակման և բժշկության ոլորտներում:

**Խնդրի քվածք:** Ներկայացվող աշխատանքը նվիրված է բնական և արհեստական լեռնային փորվածքներում ռադիուակտիվության բաշխման անհամասեռությանը, քանի որ տարածքների շահագործման, շինարարական աշխատանքների, տուրիստական երթուղիների ընտրության և այլ աշխատանքների ժամանակ խիստ կարևոր է ռադիուակտիվ դաշտի, հատկապես ռադոնի ինտենսիվության իմացությունը: Որպես կանոն, բազմահարկ շենքերի վերին հարկերում ռադոնի կոնցենտրացիան ավելի ցածր է, քան առաջին հարկում: Նորվեգիայում անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ փայտյա տներում ռադոնի կոնցենտրացիան ավելի բարձր է, քան աղյուսե տներում: Հողում, անկախ նրա կազմությունից, ռադոնի պարունակությունը զգալիորեն բարձրանում է, ինչը պայմանավորված է հողում նրա անցանելիության ավելացումից: Ըստ ՍՍԴԱՏԵ-ի տվյալների, ռադոնի ճառագայթահարման հետևանքով աշխարհում տարեկան մահանում է 100 000-ից ավելի մարդ, հատկապես շնչափողի և թոքերի քաղցկեղի, արյան լեյկոզի պատճառով: Դրան հակառակ՝ ռադոնի չափավոր քանակությունը բավարար դրական ազդեցություն է ունենում (առողջարաններում ռադոնային ջրերի լոգանքները)

մարդու օրգանիզմի վրա: Երբ լեռնային ապարներում ռադիումի (Ra) տրոհման հետևանքով առաջացած ռադիոն (Rn) կուտակվում է ապարների և միներալների ծակոտիներում, խոռոչներում և այլ ազատ տարածություններում, ապա տեղի է ունենում էկսիալացիա, որը իրականացված է 3 հաջորդական փուլերով [5].

- ռադոնի անջատում լեռնային ապարների և միներալների բյուրեղային ցանցից և անցում ապարների ծակոտիներ և միկրոճեղքեր,
- ռադոնի դիֆուզ տարածում ապարների ծակոտիներում և միկրոճեղքերում,
- ֆիլտրացիոն-դիֆուզիոն տեղափոխություն միկրոճեղքերով դեպի մքնոլորտ:

**Հետազոտության մեթոդիկան:** Աշխատանքում ներկայացված դաշտային ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ Վայոց ձորի տարածքում, որտեղ կան զբոսաշրջիկների այցելությունների համար հետաքրքիր պատմական վայրեր, այդ թվում նաև քարայրներ: Քանի որ զբոսաշրջությունն ինչպես ամրող աշխարհում, այնպես էլ Հայաստանում համարվում է տնտեսության զարգացման համար եկամտաբեր ոլորտ, անհրաժեշտ է ավելի լուրջ և ժամանակակից մոտեցում ցուցաբերել այդ խնդրին: Ցանկավի է զբոսաշրջային վայր դարձնել նաև Վայոց ձորի Մողրով և Արջի պատմական քարայրները, որոնցում կատարված ռադիոակտիվ դաշտի ինտենսիվության դիտարկումների արդյունքները ներկայացված են ստորև:

Վայոց ձորի ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ իր անկրկնելի բնության և պատմաճարտարապետական հոլովածանների տեսանկյունից: Լեռնագրական տեսանկյունից՝ խստ կտրտված ռելիեֆ, ուր գտնվում են թեքար, Կապոյտ սար և Վարդենիսի լեռնաշղթաները: Տարածքի երկրաբանական կառուցվածքում հիմնականում մասնակցում են կավճի, պալեոգենի եղցնի, ինչպես նաև չորրորդական ժամանակաշրջանի նատվածքներ և հրաբխային արտավիժումները [6]: Վայոց ձորի կրաքարային նատվածքներում առաջացել են քազմաթիվ քարայրներ (Մողրովի, Արջի և այլն), որոնք նախկինում ծառայել են որպես բնակատեղեր, իսկ ներկայումս զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն ունեցող վայրեր են: Քարայրներ հիմնականում շատ են հանդիպում հրաբխային հոսքերի եզրամասերում, որտեղ ապարներն անհամասեն են և հեշտությամբ են ենթարկվում էռողիոն գործնաթացներին: Մողրովի և Արջի քարայրների ռադիոացիոն վիճակի պարզաբնան համար մեր կողմից կատարվել են համապատասխան դաշտային ռադիոչափական ուսումնասիրություններ:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են ժամանակակից, մեծ ճշություն ունեցող MKC-AT 1125 մակնիշի դոզիմետրի (գործարանային համար 6020) օգնությամբ: Ռադիոակտիվ դաշտի պատկերը Երևանում և Մողրովում պարզելու համար ուսումնասիրությունները ակտել ենք Երևանի տարբեր մասերում կատարած նոր դիտարկումներով: Սինչև համապատասխան քարայրներ, տարբեր կետերում՝ 2 կմ միջակայքերով, կատարվել են ճառագայթման դոզայի հզորության դիտարկումներ, այնուհետև նույն օրը նման չափումներ կատարվել են քարայրների մուտքերի մոտ, տարբեր ազիմուտներով և նրա ներսում, ամեն 10 մ մեկ: Քանի որ Երկրի մակերևույթի վրա գրանցված ռադիոակտիվ դաշտի մոտ 84%-ը կապված է տեղանքի ապարների, իսկ 16%-ը՝ տիեզերական ճառագայթման հետ, այդ պատճառով քարայրի

мուտքի մոտ դաշտի ինտենսիվությունը մոտ 15–20%-ով ավելի բարձր է, քան քարայրների ներսում: Այսպիսով՝ ռադիոակտիվ դաշտի տիեզերական ֆոնն իր փոքր թափանցելիության շնորհիվ չի գրանցվում քարայրի ներսում, որի համար այստեղ գրանցվում է ռադիոակտիվ ֆոնային արժեքից ցածր  $\approx 0,9$ , իսկ որոշ կետերում  $0,10\text{--}0,12$  արժեքներ: Երկու քարայրների ներսում ռադիոակտիվ դաշտի ինտենսիվությունը նույն է, քանի որ նրանք ունեն նույն երկրաբանական կառուցվածքը և գունվում են նույն տեկտոնական գոտում:

**Եղբակացություն:** Համաձայն վերոհիշյալ փաստերի՝

- ՀՀ բնակչության ճառագայթահարման ազդեցության հզորությունը մեկ տարվա ընթացքում կազմում է  $0,3+0,6$  միլիզիլիոր:
- ռադիո գազի ճառագայթահարումից խուսափելու համար ամեն օր բնակելի տարածքները պետք է օդափոխել մի քանի ժամով;
- բնակավայրերի, շինարարական տարածքների ընտրության ժամանակ անհրաժեշտ է անպայման հաշվի առնել ինչպես տարածքի, այնպես էլ օգտագործվող շինանյութի ռադիոակտիվությունը;
- մեր կարծիքով զրոսաշրջիկների մուտքը Մոզրով և Արջի քարայրներ ռադիոակտիվության տեսանկյունից անվտանգ է և այդ քարայրներում անվտանգության պայմանները բավարարելով կարելի են կազմակերպել զրոսաշրջային այցելություններ:

Ստացվել է՝ 12.11.2019

Գրախոսվել է՝ 22.11.2019

Հաստատվել է՝ 09.12.2019

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Новиков Г.Ф. *Радиометрическая разведка*. Л., Недра (1989), 407 с.
2. Султанходжаев А.Н. и др. *Радиоактивные эманации геологических процессов*. Ташкент (1979), 119 с.
3. Фор Г. *Основы изотопной геологии*. М., Мир, 590 с.
4. Башков Ю.А. *Радиация, дозы, эффекты, риск*. М., Мир (1990), 79 с.
5. Эйби Дж. *Землетрясения*. М., Недра (1982), 264 с.
6. Սարգսյան Հ.Հ. Հայաստանի երկրաբանական համրազիտարամ: Եր., Գեոիդ (2013), 672 էջ:

А. С. САРДАРЯН, М. А. ГРИГОРЯН, В. П. ВАРДАНЯН, М. С. МКРТЧЯН

#### ОСОБЕННОСТИ РАДИОАКТИВНОГО ПОЛЯ В ЕСТЕСТВЕННЫХ И ИСКУССТВЕННЫХ ПОДЗЕМНЫХ ПУСТОТАХ (по результатам исследований, проведенных в пещерах Мозров и Арчи)

#### Резюме

В настоящей работе представлено радиоактивное поле в естественных и искусственных подземных пустотах. По проведенным в пещерах Мозров и Арчи полевым наблюдениям выявлено, что в этих пустотах интенсивность

радиоактивного поля из-за отсутствия радиоактивных  $\gamma$ -излучений, идущих от ионосферы, меньше, чем на поверхности Земли. Это надо учесть при эксплуатации участков, выборе туристических маршрутов и при проведении строительных работ.

A. S. SARDARYAN, M. A. GRIGORYAN, V. P. VARDANYAN, M. S. MKRTCHYAN

FEATURES RADIATION FIELD  
IN NATURAL AND ARTIFICIAL UNDERGROUND CAVITIES  
(according to observations in Mozrov and Arji caves)

Summary

Radiation field in natural and artificial underground voids is presented in the work. Based on field studies, carried out in Mozrov and Arji caves, it was revealed the intensity of radiation field in these voids is lesser than in ambient conditions because of absence of  $\gamma$ -ray radiation there, which are penetrate into atmosphere from ionosphere. This should be taken into account during the operation of the indoor premises, selecting tourist trips, and construction works.